ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի 018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1.Ազգային ժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի «ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեում, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովում (ԵԱՀԿ ԽՎ), Միջխորհրդարանական միությունում, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովում և Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակությունների կազմերը հաստատելու մասին» ԱԺԽՈ-018-Ա որոշման.

1) 1-ին հավելվածում՝ ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Արամ Վարդևանյան «Հայաստան» խմբակցություն» բառերը փոխարինել «Ասպրամ Կրպեյան «Հայաստան» խմբակցություն» բառերով, իսկ «Հռիփսիմե Ստամբուլյան «Հայաստան» խմբակցություն» բառերը փոխարինել «Թադևոս Ավետիսյան «Հայաստան» խմբակցություն» բառերով:

2) 3-րդ հավելվածում՝ Միջխորհրդարանական միությունում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակության կազմում, «Արամ Վարդևանյան «Հայաստան» խմբակցություն» բառերը փոխարինել «Աննա Գրիգորյան «Հայաստան» խմբակցություն» բառերով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2023 թվական, մարտի 20
Երևան
ԱԺԽՈ-020-Ա